ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 մարտի 2020 թվականի N 109-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, դրամական օգնության խնդրանքով դիմած քաղաքացիների դիմումների հետ տարվող աշխատանքների կանոնակարգման նպատակով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել «Դրամական օգնության համար ՀՀ Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների ուսումնասիրման հանձնաժողովի գործունեության և դրամական օգնության հատկացման» կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Դրամական օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի նախագահին՝ ապահովել սույն կարգով սահմանված գործառույթների իրականացումը:

Недействительная подпись

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640177

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Հ. Պողոսյան**

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի 2020թ.-ի

30 մարտի N/09 որոշման

ԿԱՐԳ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կարգով սահմանվում է.

2) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան (այսուհետև՝ մարզպետարան) դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) գործունեությունը

3) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների ուսունասիրման կարգը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ

2.Հանձնաժողովի նպատակն է՝

1) ՀՀ պետական բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով Սյունիքի մարզպետարանին հատկացված միջոցների նպատակային և հասցեական բաշխումը և տրամադրումը դրամական օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիներին,

2) Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների ընտանիքների սոցիալական վիճակը բնութագրող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և հանձնաժողովի նիստերի ժամանակ քննարկումը:

III. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

3. Դրամական օգնությունը տրամադրվում է մարզպետի որոշմամբ:

4. Դրամական օգնության չափը հանձնաժողովի առաջարկով հաստատում է մարզպետը:

5. Առանձին դեպքերում (քաղաքացիների ընդունելության ժամանակ կամ այլ չնախատեսված դեպքերում) քաղաքացիներին օգնություն տրամադրելու կամ մերժելու հարցը որոշում է մարզպետը՝ առանց հանձնաժողովի եզրակացության:

6. Հատկացված գումարները քաղաքացիները ստանում են անկանխիկ եղանակով:

7.Դրամական օգնություն, որպես կանոն, կարող են ստանալ սույն կարգով սահմանված այն ընտանիքները, որոնց անդամները վերջին 12 ամիսների ընթացքում մարզպետարանից դրամական օգնություն չեն ստացել:

8. Դրամական օգնության հատկացման կամ մերժման վերաբերյալ դիմումատուներին տեղեկացվում է գրավոր ծանուցման միջոցով:

IV.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է մարզպետի որոշմամբ:

10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

11. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

13. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

14. Հանձնաժողովի նախագահին և քարտուղարին նշանակում է մարզպետը:

15. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

16. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի որոշմամբ:

17. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

2) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,

3) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին,

10. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը:

18. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստին մասնակցած անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, ընդ որում՝ ձայների հավասար բաշխման դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

20. Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվում է մարզպետի որոշմամբ:

V.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

21. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) Հանձնաժողովի նիստի ժամանակ անհատապես քննարկել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիայական ապահովության բաժնի կողմից քաղաքացիների դրամական օգնության դիմումների ուսումնասիրությունների արդյունքները:

2) Հանձնաժողովը դրամական օգնություն տրամադրելու մասին առաջարկություն է ներկայացնում մարզպետին՝ հաշվի առնելով՝

1) միայն կենսաթոշակառուներից, ծերության կամ հաշմանդամության նպաստառուներից բաղկացած ընտանիք լինելը.

2) ընտանիքում մեկից ավելի երեխայի առկայությունը.

3) ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի երկարատև հիվանդությունը.

4) ընտանիքի կազմում գործազուրկ ունենալու հանգամանքը.

5) ընտանիքի կազմում ուսանող ունենալու հանգամանքը.

6) բնակարանի հրդեհը, բնակարանի (մի մասի) փլուզումը, ներտնային հաղորդակցուղիների վթարները և նմանատիպ այլ հանգամանքներ.

7) ընտանիքի անդամի մահը, ինչպես նաև կյանքի դժվարին այլ իրավիճակների պատճառներով առաջացած կարճատև ֆինանսական խնդիրների առկայությունը:

Недействительная подпись

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան